ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այգեվան համայնքի Համայնքապետի զեկույցը համայնքի ժողովի ընթացքում

Հարգելի Այգեվան համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես Ձեզ կներկայացնեմ 2011թ. I կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին: Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի և տեղեկություններ համայնքում հուզող հիմնախնդիրների մասին:

Համայնքում հավաքագրվել է ընդամենը 7950.4հազար դրամ գումար որից՝

1.գյուղատնտեսական նշանակության հողի հարկ հավաքագրվել է 77.7հազար դրամ

2.գույքահարկ է հավաքագրվել 264.5հազար դրամ կամ 15.5%

3.հողի վարձակալության վարձավճար 300.0 հազար դրամ կամ 49.1%

4.հողի օտարումից մուտքեր 61.8 հազար դրամ

5.պետության կողմից տրվել է դոտացիա 7171.6 հազար դրամ:

Համայնքում կատարվել են հետևյալ ծախսերը և աշխատանքները:

1.վճարվել է 2011 թվականի I կիսամյակում աշխատավարձ 3584.2 հազար դրամ

2.վճարվել է կենսաթոշակային ֆոնդի գումար 775.69 հազար դրամ

3.համայնքի անապահով ընտանիքներին և պատերազմի վետերաններին տրամադրվել է օգնություն 960.0 հազար դրամ

4. կատարվել է խորքային հորերի պոմպերի վերանորոգում 909.0 հազար դրամ

5. պատերազմի վետերանների համար մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում 232.0 հազար դրամ

Ավարտվել է պետության կողմից գյուղի դպրոցի ներքին հարդարման և լոկալ ջեռուցման կաթսայատան շինարարության աշխատանքները:

Իմ կարծիքով բավականին աշխատանքներ են կատարվել 2011 թվականին I կիսամյակում, սակայն կան ևս մի քանի առաջնային

խնդիրներ, որոնք կցանկանայի ի կատար ածվեր 2011թ II կիսամյակում՝

1.մշակույթի տան վերանորոգում
2.խմելու ջրագծի անցկացում

Համայնքի հարգելի բնակիչներ 2011թ. II կիսամյակի ընթացքում համայնքի առջև ծառացած խնդիրների լուծման և համայնքի վիճակը բարելավելու համար հաշվի կառնվեն Ձեր կողմից առաջ քաշված բոլոր տեսակի առաջարկություններն ու հիմնախնդիրները:

2011 թվականի բյուջեի կատարման և Ձեր կողմից առաջարկված կարևորագույն աշխատանքները կատարելու համար հարկավոր է Ձեր աջակցությունը՝ այն է ժամանակին կատարել Ձեր հարկային պարտավորությունները:

ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ս.ԷՔԻԶՅԱՆ